Իմ անձնական և կրթական ուղին, նպատակներն ու ապագայի տեսլականը

Իմ կրթական ճանապարհը ձևավորվել է ոչ միայն ակադեմիական հետաքրքրությունների, այլև կյանքի դժվարությունները հաղթահարելու փորձի միջոցով։ Հայրիկիս կորուստը իմ կյանքի ամենածանր փորձություններից էր։ Այդ ժամանակից հետո ես, լինելով ընդամենը 7 տարեկան, ստիպված էի ավելի ինքնուրույն դառնալ և պատասխանատվություն ստանձնել սեփական ապագայիս համար։ Մարզից Երևան տեղափոխվելը, վարձով բնակվելը և ուսումս աշխատանքի հետ համատեղելը հեշտ ճանապարհ չեն եղել, սակայն այդ պայմանները երբեք չեն ստիպել ինձ հրաժարվել կրթական նպատակներից։ Ընդհակառակը՝ դրանք ինձ սովորեցրել են լինել աշխատասեր, կազմակերպված և հետևողական։

Բակալավրի կրթությունս ստացել եմ Երևանի պետական համալսարանում՝ «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ։ Համալսարանական տարիներին ձգտել եմ զարգանալ ոչ միայն ակադեմիական, այլև գործնական ոլորտում՝ անցնելով մասնագիտական պրակտիկա ՀՀ Ազգային ժողովում։ Այս փորձառությունները օգնեցին ինձ ավելի հստակ պատկերացնել իմ մասնագիտական ուղղությունը և ամրապնդեցին միջազգային հարաբերությունների նկատմամբ հետաքրքրությունս։

Ուսման ընթացքում ձևավորվեց նաև իմ խոր հետաքրքրությունը միջազգային իրավունքի նկատմամբ, ինչի արդյունքում որոշեցի շարունակել կրթությունս մագիստրոսական մակարդակում՝ միջազգային իրավունքի ուղղությամբ։ Ցանկանում եմ միջազգային հարաբերությունների ոլորտում ձեռք բերած գիտելիքներս համադրել իրավական խորացված կրթության հետ և ապագայում աշխատել դիվանագիտության, միջազգային կազմակերպությունների կամ պետական կառույցների ոլորտում։

Իմ նպատակն է դառնալ մասնագետ, ով կարող է ներկայացնել Հայաստանը միջազգային հարթակներում, նպաստել միջազգային համագործակցությանը և իր գիտելիքներն օգտագործել հասարակության ու երկրի համար օգտակար աշխատանք կատարելու նպատակով։ Ինձ համար կրթությունը պարզապես դիպլոմ չէ. այն հնարավորություն է զարգացնելու իմ ներուժը, ձեռք բերելու մասնագիտական անկախություն և ապագայում արժեք ստեղծելու։

SOAR Global-ի կրթական հովանավորությունը ինձ հնարավորություն կտա շարունակել մագիստրոսական կրթությունս և առավել կենտրոնանալ մասնագիտական զարգացմանս վրա։ Այդ աջակցությունը ես կընկալեմ ոչ միայն որպես ֆինանսական օգնություն, այլև որպես վստահություն իմ ներուժի և անցած ճանապարհի նկատմամբ։ Ես ցանկանում եմ այդ վստահությունն արդարացնել՝ առավելագույնս օգտագործելով կրթության ընձեռած հնարավորությունները և ապագայում իմ մասնագիտական գործունեությամբ օգտակար լինելով Հայաստանին և հասարակությանը։

Իմ անցած ճանապարհն ինձ սովորեցրել է, որ դժվարությունները կարող են փոխել մարդու պայմանները, բայց չպետք է որոշեն նրա ապագան։ Ես ընտրել եմ առաջ շարժվելու ճանապարհը և ցանկանում եմ կրթության միջոցով կառուցել այն ապագան, որի համար այսքան հետևողականորեն աշխատել եմ տարիներ շարունակ։

Ուսման վարձի ֆինանսավորման անհրաժեշտ գումարի մանրամասները

Ես սովորում եմ Երևանի պետական համալսարանի «Միջազգային իրավունք» մագիստրոսական ծրագրում։ Ծրագիրը նախատեսված է 3 կիսամյակի համար, յուրաքանչյուր կիսամյակը՝ 500.000 ՀՀ դրամ, իսկ ընդհանուր ուսման վարձը կազմում է 1.500.000 ՀՀ դրամ (~4.110 $)։

Համալսարանում հրամանագրվելու համար ես արդեն վճարել եմ 125.000 ՀՀ դրամ (~340$), քանի որ սահմանված էր հստակ ժամկետ մինչև հուլիսի 20։

Ուստի ներկայումս մնացած ուսման վարձը կազմում է 1.375.000 ՀՀ դրամ (~3770$)։

Կրթական հովանավորության ցանկացած չափի աջակցություն ինձ համար մեծ նշանակություն կունենա և հնարավորություն կտա շարունակել ուսումս։